№ 133 Օգոստոսի 1 (13) **1880** Օգոստոսի 1 (13) № 133

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 բուբլի։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարազգացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Ռացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին տեսութիւն։ Հայոց հնութիւններ։ Թիֆլիսի Հաւաքարի Ս. Մարիամեան օր. դպրոցի հարցը։ Նամակ Աստրախանից։ Նամակ Նուխուց։ Նամակ Բագուից։ Նամակ Խարիսովից։ Նամակ Թասովից։ Նամակ Շամախուց։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։ — Արտաքին տեսութիւն։ Ռուսի մասին։—«Մշակի» հեռագրերը։ —Յայտարարութիւններ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Ամէն մի ազգութեան անցեալ փառքի հետ ծանօթանալու համար, հարկաւոր է նրա պատմութիւնը, գրականութիւնը և հնութիւնները հետազօտել, ուսումնասիրել, որպէս զի, այդ ազգութեան կուլտուրական առանձնահատկութիւնները ճանաչելով կարելի լինի հաստատ գաղափար կազմել նրա անցեալ արժանաւորութիւնների մասին մարդկութեան շրջանում։ Հնութիւնը քննում է ազգութիւնների նախկին ճարտարապետութիւնը և հանճարը, որը արտայայտվում է նրա յիշատակարանների և արհեստի մէջ։ Հայրենեաց հնութիւնների բեկորները ոչ սակաւ օգնութիւն են բանասէրների հանճարը, որ երգվում նախկին գիւտագործների մեծագործութիւնները, մի և նոյն ժամանակ օգնութիւն են ներկայ սերունդը հայրենասիրական վէհ զգացմունքով։ Եւ հնութիւնների ամէն մի բեկորը կենդանի վկայ է այն տխուր արկածների, որ անցել են մեր նախնիքների հետ և մնացել են անմոռաց մեր յիշողութեան մէջ։

Հայաստանը զուրկ չէ երեւելի հնութիւններից։ Հայ ազգը ասիական ցեղերի մէջ ամենահին և նշանաւոր ազգերից մէկը լինելով, իրաւամբ կարող է, ինչպէս եւրոպական ճանապարհորդների, այնպէս և շատ հնագէտների հետաքրքրութիւնը գրաւել իր հրաշալեցս և ուշագրութեան արժանի հնութիւններով։ Թիֆլիսի առաջնակարգ հնագիտական ժողովի համար կարելի է պատրաստել Հայաստանի յիշատակարաններից այնպիսի նիւթեր, որոնք թեազգին կարող են լինել գիտութեան համար և որոնք պէտք է կատարեալ լոյս սփռեն մեր անցեալի վրա։ Հայը, ցոյց տալով Եւրոպային իր պատմութիւնը, իր կլասիկական անցեալը, իր գրականութիւնը, իր արհեստը և հնութիւնները կարող է իրաւամբ վայելել լուսաւոր աշխարհի համակրութիւնը և յարգանքը։

Մօտ օրերումս պ. Կարապետ Յովհաննէսեանը հրատարակելով մի նկար, որ պատկերացնում է Անի քաղաքի հնութիւնների մի մասը, մի գեղեցիկ նիւթ ընծայեց հնագիտական ժողովին։ Այդ գեղեցիկ նկարը, որ դեռ 1850—51 թուականներին նկարել է երեւելի ճարտարապետ Կէյսերը, հայր. Ղազ. Վ. Աբարատեանի ջանքերով մինչև այսօր պահվում էր նոյն հայր. սուրբի մօտ, իսկ այժմ մի սեսակ հանգամանքներ դուրս եկան նրա գրպարանից։ Մեր կարծիքով, անիրաւացի կը լինէր, եթէ մի յայտնի անձնաւորութիւն սեփական նպատակներ միւսի աշխատութիւնը, որը իրաւամբ կարող էր երկրորդի անհամանձնաւորութիւնը շարժել։ Եւ այժմ, ինչպէս լսում ենք, այդ նկարը մեծ պատասխանատուութիւն ունի իր ամբողջութեան կողմից, որովհետև նրա կիսաւոր շրջապատիցը և բաւական մեծ քանակութեամբ արձանագրութիւնները մնացել են հայր Ա. Վ. Աբարատեանի մօտ, որն չէ կամեցել յանձնել պ. Կ. Յովհաննէսեանցին։ Ցանկալի է, որ հայր Աբարատեանը դիմելով այժմեան պահանջին, արժան հարկ համարէր խրախուսել պ. Կ. Յովհաննէսեանին, յանձնելով նրան այդ նկարի պատասխանատու տեղերը, որով կամրողջացնէր ինչպէս նկարի թերութիւնները, այնպէս և իր հայրենասիրութիւնը մեր սրտերում։ Հայը առաջ սովորի էր իր հնութեան վրա միայն ոչրալով բաւականանալ (ինչպէս այդ արել է և հայր Աբարատեանը իր «Անի քաղաք» սարամբիկ երգով), այժմ պէտք է երեւան հանել նրանց գիտութեան առջև, որ ցոյց տայ իր փառաւոր անցեալը։ Լաչին սոսիր են միայն սարուկները և յուսահատները, իսկ այն ազգութիւնը, որը կամենում է ապրել, պէտք է հանգամանքներից օգուտ քաղել գիտենալ և աշխատել յետ չը մնալ լուսաւոր ազգերից։

Պետրոս Բէպուրեան

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՒԼԱԲԱՐԻ Ս. ՄԱՐԻԱՄԵԱՆ ՕՐ. ԴՊՐՈՑԻ ԵԼ. ԵՒ ՄՏԻՑ ՀԱՆԻՍԻ

—

1878-ի սեպտեմբերի 1-ից մինչև 1879-ի սեպտեմբերի 1-ը։

Մուտք. աշակերտուհիներից 391 ր. 11 կ., մեծ. պ. Մկրտիչ Սանասարեանից հօտը աշակերտուհեաց ուսման վարձ 150 ր., բարեբական նուէրներից 242 ր., իններորդ տարեդարձի օրվայ վիճակախաղից 186 ր. 20 կ., մեծ. պ. Նիկ. Միրզոյեանի աշխատութեամբ տուած թատրոնական ներկայացումից 379 ր., երգանկայիշատակ Էվենդիանի կտակած իւրաքանչիւր տարի Թիֆլիսի ծխական դպրոցներին հանելի 500 ր. գումարից 146 ր. 64 կ., կարգադրութեամբ կոնսիստորիայի Հաւլաբարու ս. Մինաս, ս. Կարապետ, Շամքոռեցւոց և Էջմիածնեցւոց եկեղեցիներից 350 ր.։ Գումար 1844 ր. 82 կոպ.։

Ծախք. ռոճիկ ուսուցիչների և վարուհուն 1270 ր. 96 կ.։ *)

Բնակարանի վարձ 240 ր., աղախնին 36 ր., Ջրի և փայտի 62 ր., ձեռագործի և ուսումնական պարագայից 146 ր. 64 կ., երկու մատանի 8 ր., 1877 թ. օգոստոս ամսվայ պարագ 14 ր. 41 կ., գրատախտակների, ժամացոյցի և այլ կարասեաց 71 ր. 98 կ.։ Գումար 1849 ր. 99 կ.։

Ծախքի և մուտքի տարբերութեան հաւասարման դպրոցի զանձարանը ունեցել է պարագ առ մէջն սեպտեմբերի 1879 թ. 5 ր. 17 կ.։

Դպրոցը վերոյիշեալ 1878—79 տարվայ ընթացքում ունեցել է հետեւեալ բարերարները.—

Հայ ոմն., տիկ. Նատալիա Նարիմանեանց, Յ. Մուրէէանց, Միք. Տէր-Նիկողայոսեանց, Ալէք. Թայիրեանց, Կատարինէ Թայիրեանց, բժշկապետ Գրիգ. Քուլարեանց, Մինա Նազարովգեան, Վարդան Տէր-Պօղոսեանց, տ. Կատարինէ Զամանեանց, Հռիփ. կոյս Թայիրեանց, բժիշկ. Յով. Մարգարեանց, տ. Սօֆիա Սուլթանգուլեանց, Ա. Ալիքանեանց, տ. Կատարինէ Մելիք-Վարագուեանց, Յով. Յովհաննէսեանց, Սօֆիայ Յոպխանեանց, Սօֆիա Զիթախանեանց, Աննա Զիթախանեանց, Մարիամ Զիթախանեանց, Աննա Էմինեանց, Նատալիա Թօսունեանց, Քալի Սահակեանց, Ադէք. Շահինեանց, տ. Մարիամ Ադաբեգեանց, Գարնիայ Մանթաշեանց, Գրիգոր Շաղինեանց, Սա. Եղմիրեանց, Սեմենքերիմ Արծրունի, Աննա Մանդինեանց, Գրիգոր Թօսունեանց, տ. Սաւոմէ Առաքելեանց, Նիկ. Տէր-Յակոբեանց։ Վերոյիշեալ 1878—79 տարվայ ընթացքում դպրոցը ալեւ ստացել է նուէր մեծ. տ. Մակայ Նիկողոսեանից մի գեղեցիկ պատարան և քանի մի կտոր գրքեր։ Վարչութիւնը յայտնում է դպրոցի բոլոր բարերարներին իր հրապարակական շնորհակալութիւնը։—1879—80 թուականի ել և մտից հաշիւը վարչութիւնը կը հրատարակէ առաջիկայ սեպտեմբերին։

Ի դիմաց վարչութեան ստորագրեցին ներկայացուցիչ՝ Կ. Թէմուրգանց, գանձապահ՝ Յով. քահ. Մարգիրոսեանց, քարտուղար՝ Ա. Գուլպեանց։

Մայիսի 25-ին (1880 թ.) Հաւլաբարի Ս. Մարիամեան օր. դպրոցի վարչութիւնը, ինչպէս յայտնի է, կատարից դպրոցի տասնամեայ գոյութեան տարեդարձի յիշատակը։ Այդ օրը դպրոցի անուանական և ուսումնական հաշուետուութիւնից յետոյ եղաւ աշակերտուհեաց ձեռագործեղինաց վիճակախաղը, որից զոյացաւ 180 ր. 16 կ.։ Թէ՛ հանդիսին և թէ՛ վիճակախաղին շատ նպաստեցին վարչութեանը մեծ. օր. օր. Կատարինէ Ասլամազանցը և Մարիամ Վարդանեանցը, որոնց վարչութիւնը յայտնում է իր խորին հրապարակական շնորհակալութիւնը։ Տարեդարձի յիշատակը յարգեց իր ներկայութեամբ Ի՛ մէջի այլոց մեծ. Յովհաննէս Զիթախանեանցը, որը, ցանկանալով յայտնել իր համակրութեան զգացմունքը դպրոցին, բարեհաճեցաւ ստորագրել դպրոցի բարերական մատեանում 80 ր., խոստանալով վճարել այդ գումարը տասնեայ տարի շարունակ։ Այդ գումարով դպրոցը պարտաւոր է պահպանել չորս որդեգրուհիներ արհեստաւոր դասից յանուն Յով. Զիթախանեանցի, Սօֆիայ Զիթախանեանցի, Մարիամ Զիթախանեանցի և Աննա Զիթախանեանցի։ Վերոյիշեալ պարոնը խոստացաւ կատարել և մի մեծ գործ դպրոցին, որի մասին հետեւեալ համարներում կը խօսվի հետագիտէ։

ՆԱՄԱԿ ԱՍՏՐԱԽԱՆԻՑ

—

Յուլիսի 16

Յուլիսի 14-ին հայ սիրոդները կատարվութեամբ Ց. Ալաբեանի, ամարային թատրոնում, մի ներկայացում տուին յօգուտ Ալաբեանի։

Ներկայացում էին «Լեզգիների Զանգակահարը» դրամա 4 գործողութիւնով, թարգմանութիւն Թաղլեանի և «Ուսուցիչ և աշակերտ» վոդեվիլ 1 գործողութիւնով։ Ա.հանարակ, բացի Ալաբեանից, մնացեալ մասնակցողները չատ թոյլ էին իրանց դերերում և մի քանիսները վոդեվիլում ամենեին չը գիտէին իրանց դերերը։

Մեզ համար զարմանալի է, մթթէ պ. Ալաբեանը չէ կարդացում հասկանալ, որ այսպիսի պիեսաները փորձված դերասաններին հարկ է պատահում յանձնել կերպով կատարել, ուր մնայ մեր անվարժ երիտասարդներին։

Եւ բացի դրանից, այսպիսի պիեսաներից հասարակութիւնը ինչ բարոյական կամ մտաւոր օգուտ կարող է քաղել։

Կարծեմ աւելի յարմար կը լինէր, եթէ պ. Ալաբեանը ընտրէր իր ներկայացումների համար մեր կեանքից վերցուած պիեսներ, օրինակ, պ. Սունդուկեանինը կամ ուրիշները, որոնց մէջ հասարակութիւնը իր պատկերը կը տեսնէր և այն ժամանակ թատրոնը աւելի կը հետաքրքրէր նորան։

Ցնծոյս հասարակութիւնը խմանալով, որ մինչև անցեալ են լինում և ճանապարհի պ. Ալաբեանի ներկայացումները, այս պատճառով չէ այցելում։ Այս անգամ թէև բաւական ժողովուրդ կար, բայց հաւաքեա բոլորը օտարաբարբարոսներ էին, որովհետև տարվայ այս ժամանակը մեզ մօտ չատ են լինում օտարաբարբարոսներ։

Ցանկալի կը լինէր, որ այժմ հայ երիտասարդները աշխատէին ներկայացումներ տալ յօգուտ Ցանկասանի հայ սովատանջների. այժմ չատ հեշտ է այս նպատակը իրագործել, որովհետև չատ ուսանողներ վերադարձել են իրանց հայրենիքը արձակուրդի պատճառով, զրանք կարող են մասնակցել։ Վերջացնելով նամակս, աւելորդ չեմ համարում հաղորդել, որ յուլիսի 10-ից բացված է մեր քաղաքի ջրանցքը։ Այս տարվայ ոչ չորեր ծերունիները չեն յիշում, ջերմաչափը հասնում էր մինչև 40 և 43 Ռէումիւրի։

Անցաց

ՆԱՄԱԿ ՆՈՒԽՈՒՑ

—

Յունիսի 6

Այս յիսուն և երկա բուբլին վանայ սովատանջ հայերի օգուտն ժողոված լինելով, ահա ուղարկում եմ խմբագրութեանդ և խնդրում եմ որ հասցնէք, ուր հարկն է։ Ժողովարարութեանը ամենայն ուրախութեամբ մասնակցեցին Սիմէոն քահանայ Տէր-Պողոսեանցը և ուսուցիչ պ. Ալէքսանդր Յակովբեանցը։ Նուիրատուների մեծ մասը օտարականներ են. ստորագրութիւնը կը չարունակվի թէ ինչպէս կը վերաբերվեն այս գործին մեր նուխեցի հայերը, այդ մասին, երևի, մի ուրիշ անգամ կը գրեմ։

Մարտիրոս Աբրահամեանց

ՆԱՄԱԿ ԲԱԳԻՒՈՒՑ

—

16 յուլիսի

Բագուից պ. Ա. Մովսէսեան չափազանց սիրալ տեղեկութիւններ էր հաղորդել «Մշակի» № 114-ի մէջ։

Պ. Մովսէսեանը «Մարդ. Ընկ.» տարեդարձի մասին ասում է, որ պ. Ա. Գրիգորեանը մի անհամ ճառախօսութիւն արաւ, այնպէս որ հանդիսականների մեծամասնութիւնը դեռ ճառը չը վերջացած, ականջները խփած դուրս գնաց։

Այդ մասին չարաչար սիալվում է պ. Մովսէսեանը. հասարակութիւնից և ոչ մէկը դուրս գնացած է և մինչև այսօր էլ հանդիսականները ձիգում են այդ զրպարտութեան վրա։ Բայց թէ պ. Գրիգորեանի ճառը և թէ նորա աշխատութեամբ պատրաստած ուսանողների ուսանաւորները և պատմածները թիւչ հետաքրքիր ունեցան,—այդպէս միայն կասեմ, որ հանդիսականները իրանց ծափահարութեամբ և ձայնով դուրս կանչեցին պ. Գրիգորեանցին և երկու անգամ շնորհակալութիւն յայտնեցին։ Մթթէ պ. Մովսէսեանը այդ չը տեսաւ. ու չը լսեց։

Պ. Մովսէսեանը ասում է, որ պ. Գրիգորեանը չատ գոսասանչներ թափեց Ընկ. անդամների զլխին։ Այստեղ էլ ասատիկ սիալվում է։ Մենք պ. Գրիգորեանի ճառախօսութեան մէջ զոսասանչներ չը լսեցինք. ընդհակառակը լսեցինք այնպիսի ակնարկութիւններ, որոնց ընկերուհիներն ուշադիր ցոյց էր տալիս նրա անտաղանութիւնը և ամենամարդու բան չէր։ Պ. Մովսէսեանը բանը լաւ չէ

հասկացել. երբ Գրիգորեանը նկարագրելիս է եղել ընդհանրապես ընկերութիւնների անհրաժեշտութիւնը, նորանց լաւ կողմերը, օգուտները հասարակական կեանքի մէջ, պ. Մովսէսեանը կարծել է թէ այդ գեղեցիկ յատկութիւնները (զուտանաքները) պ. Գրիգորեանը «Մարդ. ընկ.» անդամների գլխին է թափել։

Շատերից մէնը

ՆԱՄԱԿ ԹԱՐԿՕՎԻՑ

—

30 մայիս

Խնդրում եմ նեղութիւն չը համարէք, այս քառասուն հինգ բուրլին ստանաք, և ուղարկէք Վանի սովատանջների համար. միւսայ գուտարն ժողոված եմ Խարկովում զանազան մարդկանցից, այսինքն, Պետրոս Գ. Շանանագրեանց 10 ր., Սարգիս Եաղուչբաբեանց 5 ր., Անոյատ մարդկանցից, ռուս ու հայ, 20 ր., Վասիլի Ակէքսանդրովիչ Մատվեով 5 ր. Ընդամենը 45 բուբլ։

Մարտիրոս Վասիլեան

ՆԱՄԱԿ ԲՈՍՏՕՎԻՑ (ԴՈՆԻ Վ.ՐԱ)

—

Յունիսի 2-ին

Հանգանակութեամբ ժողոված եմ տեղիս փոքրաթիւ հայ օտարականներից յոգուտ թշուառ Վանի սովեալներին ընդամենը 39 բուբլ։ Ուղարկում եմ ձեզ ընդ գրով, խնդրելով հասցնէք ուր հարկն է, և տպագրէք նուիրատուների անունները ձեր պատուական լրագրում։

Եղբայրք Մաղավուզեանց 10 ր. 22 կ., Յակոփան Զաքարովով 2 ր., Մահամատ Թաղի Ջամալ Բէկով 1 ր., Ճանգիր Բաղիրով 1 ր., Հայ ումն 1 ր., Բաղալ Յունանով 2 ր., Թէվմս Եաղուբով 1 ր., Մկրտիչ Ստեփանով 1 ր., Ստեփան Ալիտով 1 ր., Օհանէս Յակոբով 50 կ., Գրիգորի Աչկասեաֆ 50 կ., Ներսէհտիպ 1 ր., Արգար Մարգարով 1 ր., Ալան Մարգարով 1 ր., Ալան Վազարով 30 կ., Եղոյ Խուդավերդով 1 ր., Աւետիք Բուդաղով 50 կ., Ավետ Աղաքելով 50 կ., Եփրեմ Նազարով 50 կ., Յարութիւն Սարգիսով 20 կ., Մկրտիչ Խուդավերդով 1 ր., Մինասկէ Յարութիւնով 20 կ., Պապայան Յովհաննէսով 40 կ., Հայ ումն 18 կ., Բաբայ Զաքարովով 1 ր., Մկրտիչ Զաքարովով 1 ր., Ներսէհտիպ 1 ր., Գալուստ Անպէդկով 1 ր., Թանամիր Օվասատով 1 ր., Գէորգ Պալասանով 1 ր., Դիմիտրի Պաչաջու 1 ր., Յարութիւն Թունիեանց 1 ր., Յովսկիմ Բէգլարեանց 2 ր. Ընդամենն է 39 բուբլի. փոստի ծախքը՝ վճարած եմ ինձմէն։

Ի. Մաղավուզեանց

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

—

Յունիսի 16

Երեկոյ է, օրուայ այն ժամը, երբ ցերեկվայ այրող, խեղդող տաքութիւնից յետոյ Շամախու հասարակութիւնը խումբ խումբ դիմում է «կարմիր փողոց» կամ բուլվար մի փոքր ազատ, զով օդ շնչելու։ Քաղաքի բուլվարում ժողովված են հասարակութեան ընտիր անդամները։ Այստեղ կարելի է նկատել պարթեւասակ Նազար-բէկին և կարմասական ու երկայնաքիթ կարապետ աղային, և չեկամօրուս ու կապտա աչք Իվան Ամիլինին, վերջապէս զուտ կարող էք այստեղ նկատել և հայի, և թուրքի, և ռուսի պատուելի ներկայացուցիչներին։ Նոցա մէջ տիրում է մի տաք վիճաբանութիւն։

—Ես ձեզ հաւատացնում եմ, ասում է պարթև Նազար-բէկը, ձեռքերը օդի մէջ շարժելով, որ մեր այս մտադրութիւնը չատ գեղեցիկ է։ Դուք դիտէք, որ մեր քաղաքի նման տխուր, անն մի զուարճութիւնից զուրկ քաղաքին, անպատճառ հարկաւոր է մի կլուբ ունենալը։ Մտածեցէք, պարոններ, զուք, որ իւրաքանչիւր տարի այցելում էք Մոսկվա, Պետերբուրգ, որ ծանօթ էք ուրիշ քաղաքների հասարակական կեանքի հետ, թէ էք զգում, երբ վերադառնալով այստեղ մնում ու մենակ փակվում էք ձեր տան չորս պատերի մէջ և ժամանակները սպանելու համար ճանճորսութեամբ պարապվում։

Մեր լաւ չէր լինի, եթէ մենք ևս ունենայինք մի կլուբ, ուր գնալ գիշերները ժողովվում, տեսնվինք իրարու հետ, փոխանակենք իրարու հետ մեր մտքերը և որ առաւելն է ազատ մնայինք այդ սպանող ճանճրութիւնից, որ ամէն մի քաղաքում ճրտում, խեղդում է մեզ։

—Ես իմ Աստուածս ճշմարիտ էք ասում—վկայում է Կարապետ աղան։

—Ճշմարտութիւնը աներկայելի է, շարունակում է Նազար-բէկը—դուք թիւրերդ ևս խելք ունէք, զատողութիւն ունէք, տեսնում էք մեր քաղաքի դրութիւնը, տեսնում էք մեր դրութիւնը։ Ասացէք խնդրեմ, մեր դուք ձեզ այդ ճանճրութենից ազատուելու համար կը խնայէք 15 կամ 20 բուբլի։

—Եւ ոչ 100 կամ 200 բուբլի—պատասխանում է Կարապետ աղան, համարձակ դէմքով։

—Ուրեմն էլ ինչու ենք ուշանում, ինչու ենք սպասում։

—Էլ ինչու ենք ուշանում, ինչի ենք սպասում, կրկնում են մնացեալներն և Կարապետ աղան, և Իվան Ամիլին և Նազար աղան և մնացեալները, որից յետոյ տիրում է մի խորին լռութիւն։ Հանդիսականները լուռ ու մունջ սկսում են իրարու երես նայել։

—Ասում են երկաթուղին ուզում են Շամախով անցնել, ասում է վերջապէս Այրալի-բէկը, խզելով այդ սպանիչ լռութիւնը։

—Սուտ է, մի հաւատաք, լսում է Սերգէյ Ռուստամիչի ձայնը, Շամախով երբէք երկաթուղին չէ կարող անցնել։ ախր ով է ուշադրութիւն դարձնում Շամախու։ նման մի քաղաքի, ուր ոչ դուտա կայ, ոչ գաստինցա, ոչ բանկ, ոչ կլուբ... բայց այստեղ կարծես պարոնը սթափվելով և չը կամենալով մի հին վէրք նորոգել, իսկոյն լռում է խօսքը կիսատ թողնելով։

—Բայց, պարոններ, լսում է անմիջապէս նորանից յետոյ Սարգիս աղայի խռպոտ ձայնը, ինչու մենք ևս չենք հիմնում և դուտա և բանկ, և....

—Այո, ինչու մենք ևս չենք հիմնում և դուտա և բանկ, կարում է նրա խօսքը կրկնում Կարապետ աղան, ուստնից ենք պակաս։ Այն ժամանակ, երբ Շամախին գուբերնական քաղաք էր, Բաղուի հոան անգամ չը կար, բայց այժմ Բաղուն դուտա էլ ունէ, բանկ էլ ունէ, իսկ մեզ ինչ ունենք։ Ինչ կասես սրա համար, ազա Մէհթի, գաւառում է նա դէպի իր կողքին կանգնած թուրքը, եթէ վատ եմ ասում մի ապտակ էլ երեսիս խփիր, ասիր թէ վատ ես ասում։ ախր ինչ անեմ է, բացականչում է նա ուելի և ուելի տաքանալով, մարդու սիրտը քիչ է մնում որ ճաքի, երբ մտածում է, որ հիմ ուրիշ քաղաքացիք էլ կասին թէ չամախեցիները հոգս չեն անում իրանց քաղաքի համար։ Չէ, եղբայր, այդպէս թողնել չէ կարելի, հէնց էքզոլնից պէտք է հիմնել բանկը։ Ես ինքս երեք բաժանորդ կը գրվում սրա համար, ուելացնում է նա, վստահութեամբ իր նայուածքը մեզ ածելով իր շրջապատողների վրա։

—Իսկ ես հինգ... ես վեց... լսվում են մի քանի խառնափոթ ձայներ բազմութեան մէջից։

—Իսկ ես երկու հարիւր յիսուն, բացականչում է յանկարծ Այրալի Ապտաղեիչը, որ նստարանի վրա նստած Նազար-բէկի հռետորութեան ժամանակից զուարճանում էր Մորփէսոի գրկի մէջ և այժմ յանկարծ զարթնելով ու կարծելով թէ խօսքը դեռ ես կլուրի վրա է, շռայլում է իր առատ նուէրները։

Վէճը կամաց կամաց տաքանում է։ Առաջ են գալիս նորանոր հարցեր, կազմվում են պրոէկտներ և վերջապէս գիշերվայ ժամը երկուսին մեր պարոնները շամախին մի նոր փարիզ դարձնելով, ցըրվում են իրենց տները, միւս իրիկուն ժողովվելու և կրկին խորհրդակցելու խօսք տալով իրարու։

Բայց գիտես, սիրելի ընթերցող, անս երկու տարի է, որ քաղաքի այդ ընտիր պարոնների մէջ մանն իրիկուն բուլվարի մի որոշեալ տեղում անփոփոխ կրկնվում է այդ խօսակցութիւնը, և ով գիտէ, գուցէ Նազար-բէկի, կարապետ աղայի և միւսների ժառանգները դեռ ևս չատ տարիներ մանն իրիկուն ժողովվին այդտեղ վիճելու այդ հարցի մասին։

Ա. Զախարեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 27 յուլիսի

«Մշակի» 94 համարում ի նախազդուշութիւն հայ-թարգմանիչների՝ յայտնել էի հրապարակաւ, որ արդէն թարգմանել աւարտել եմ Ջոն Ստիւարտ Բէկկի «Մաւոր, ֆիզիքական և բարոյական ինքնակրթութիւն» գիրքը։ Նիւթական դրութիւնս չը ներելով, տեսված էի բաժանորդագրութեամբ տպագրել։ այդ նպատակով դիմել էի հայաբնակ քաղաքներում գտնվող իմ բարեկամներին և խնդրել որ բաժանորդներ գտնելու նեղութիւնը յանձն առնելով, օգնէին ինձ միջոց ստեղծելու տպագրելու։ Եւ բերկրութեամբ սրտի պիտի խոստովանեմ, որ խնդիրս զուր չանցաւ։ բարեկամներից յատերը արդէն ուղարկեցին ինձ բաժանորդագիրները և դրամները։ Որովհետև «Մշակ»-ի գերդիչեալ համարում ի միջի այլոց ասել էի, որ եթէ հանգամանքները ներեն, յուլիսի վերջերին ներկայ 1880 ամի լոյս կը տեսնի գիրքը, բայց առ այժմ բաժանորդագիրները բոլոր տեղերից ստացած չը լինելով, տպագրութիւնը ամամայ պիտի ուշանայ. ուստի դիմում եմ այն ազնիւ բարեկամաց, որոնք զանազան պատճառներով մինչև այժմ չեն կարողացել հասցնել բաժանորդագիրները և դրամները, եթէ արդէն ստորագրութիւնը աւարտել են, բարեհաճեն օր առաջ ինձ հասցնելու, որպէս զի գոնէ օգոստոսի վերջերին կարողանամ աւարտել տպագրութիւնը։ Իմ հասցէն՝ Въ г. Тифлисъ. Григорію Шахъ-Будагянцу. (Въ центральную книжную торговлю. На Дворцовой улицѣ, галлерея Арцруни.)

Գրիգոր Շահբուդաղեանց

ՆԵՐՍԷՀՏԻ ԼՈՒԻՐԵՐ

—

Անցայտ մի պարոնից որ իր բնակած տեղը և անունը չէ ասել մեզ և ստորագրել է միայն Ս. Ս. տառերով, ստացանք 5 բուբլ յոգուտ «Արարատեան» ընկերութեան։

—

ՄԱՏԷՈՍ քաղաքից խաչատուր Նազարեանցից ստացանք յոգուտ Հայաստանի սովեալների 10 բուբլ, որ ինքն ստացել է իր մի բարեկամից։

—

ԳՕՐՈՒՑ մեզ գրում են. «Այս տարի ոչ մի տեղ ամբողջ Անդրկովկասում ոչիչան մորեխ չը կար, որքան Գորու գաւառում. Աւելի քան 60,000 դեսեատին, թէ վազի այգիներով, թէ ցորենի և թէ սիմինդրի ցանքերով ծածկված գեղմնը ենթարկվեցաւ մորեխի յարձակմանը։ Բայց Գորու ազգաբնակութիւնը քաջ կերպով պատերազմեց մորեխի դէմ և 60,000 դեսեատինից կարողացաւ 58,000 դեսեատին ազատել աւերիչ միջատից, իսկ միայն 2000 դեսեատին հոգի ցանքերը զոհ գնացին։ Ամբողջ ազգաբնակութիւնը զաչաք դուրս եկաւ. տղայ, աղջիկ, կին, մարդ, պառաւ, երեխայ,—բոլորն էլ պատերազմում էին մորեխի դէմ։ Առաջ ժողովրդի մէջ այն հանգամանքը կար, որ մորեխը անհնարին է ոչնչացնել, որովհետև այդ միջատը Աստուծուց մեզ ուղարկված պատիժ է և ինչքան նրան ոչնչացնես, այնքան նա կը բազմանայ։ Այժմ Գորու գաւառի գիւղացիները և կալուածատէրերը համոզվեցան որ մարդու ախտաստիպութեան առջև ոչինչ անհնարին չը կայ և որ մորեխը չատ հեշտ է ոչնչացնել ազգաբնակութեան միացած ոյժերով։»

—

Վերջին ժամանակները ռուսաց յայտնի ազգանուն կրող և հարուստ առնմին պատկանող պ. Պաշկով, հիմնել է Ն. Պետերբուրգում մի տեսակ լսարան, որտեղ անթիւ բազմութիւն, մանաւանդ ազնուական բարձր դասակարգին պատկանողներից, հաւաքվում է թէ Աստուծու խօսքը լսելու, աւետարանի վրա հիմնված քարոզների ձեւով և թէ սաղմոսներ երգելու համար։ Պաշկովի հիմնած լսարանը մի ևոնդն ժամանակ և ազոթատուն է։ Այժմ «Русск. Курьеръ» լրագիրը հաղորդում է որ այս օրերս Պաշկովի կուսակիցներից մի քանիսները եկել են և Մոսկվա, որտեղ նոնդպէս հիմնեցին մի լսարան և ազոթատուն։ Լրագիրը ասում է որ սկզբից Մոսկվայի պոլիցիան ուզեց արգելել այդ ժողովարանը, բայց ներկայ գտնվելուց յետոյ, չարգելեց։

—

Շնորհակալութեամբ ստացանք «Արարատեան» ընկերութեան ձեռքով հրատարակված և Կ. Պոլսի մէջ տպված Ն. Ցէր-Վանդեանի «Մայրենի լեզուս հեղինակութեան երկու հատորներ՝ այբենարանը և ընթերցանութեան երկրորդ գիրքը։ Տըպագրութիւնը և պատկերները բաւական աջող են։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՈՎԻ ՄԱՍԻՆ

—

Վանայ սովելոց յանձնախմբին ատենադպիր մեծ. Պ. Ս. Ցէր-Սարգիսեանց այս շաբթու Կ. Պոլիս եկաւ Վանէն։

Իւր այս ուղևորութեան ժամանակ, Պ. Ս. Ս. Սարգիսեանց Էջմիածին ալ գնացած լինելով, ամենայն Հայոց Ս. Կաթողիկոսը բարեհաճեր է եկեղեցիներէն հանգանակել մեծադումար նպաստներէն 605 բուբլի յանձնելով՝ Վանայ Պատուական Վաստակաւորաց սովատանջ ազգայնոց։

Ահա այս եղած է ամենայն Հայոց սրբազնասուրբ և բարեխնամ Հովանաւոր Վեհ. Տ. Գէորգ Դ-ի բոնեղակ օգնութիւնը Վասպուրականի 70 հազար սովալուկ ազգայնոց համար, որոնցմէ լսանենուս նայելով քանի մը հազար հոգի գժբաղդաբար զոհ գըներացած են արդէն անոր սովին։ Սուրբ մարդ չը կրնար և չուզեր հաւատալ այս բանին և սակայն ճշմարիտ է. Գէորգ Դ. Կաթողիկոսն՝ իւր վեհարանէն 12 ժամ հեռաւորութիւն ունեցող Պայազիտի, 25 ժամ հեռաւորութիւն ունեցող Պաշկերտի և 40 ժամ հեռաւորութիւն ունեցող Վասպուրականի ազգայնոց սովամահ ջարդուելին անկարելիկց աչքը դիտէ, և վերջապէս 605 բուբլիի ամենաչնչին գումար մը դրկելով զոհ կը լինի, երբոր աշխարհի հեռաւոր կողմերէն, մինչև իսկ օտարազգիք մարդասիրաբար գըթութեան ձեռք կարկառելով, հազարաւոր ոսկիներ կը դրկեն ու կը բաշխեն այդ խղճալեաց։

Ասիական Թուրքիոյ և Արևմտեան Պարսկաստանի սովելոց համար մինչև յարդ հանգանակեալ գլխաւոր նպաստից ցուցակն հետեւեալն է կըր հաշիւ.

Հայկական յանձնախումբ 20,000 ոսկի, Օսմանեան—4,000 Անգղիական 8,000—Անգղիոյ Միսիոնական յանձն. 4,000, Անգղիոյ եկեղեցական 5,000, Դաղիչէն 3,000, ուրիշ երկիրներէն 1,000, Հայ-Բողոքական հաստատութիւն 200. գումարն է 45,200։

Թուսիայէն ալ ուղղակի Վան նպաստներ դրկուած են Հայ սովելոց օգնութեան համար, բայց անոնց թիւոյն վրա առ այժմ տեղեկութիւն չունինք։ Հաւանական է որ Վանայ, Կարնոյ, Տիարպէքիրի, Մշոյ, Մուսուլի, Հէրքեսարիի, Ուրմիոյ և Դամրէժի քանի մը հարիւր հազար հայ, քուրդ, թուրք, սարի, արաբ և պարսիկ սովելոց համար մինչև յարդ հանգանակեալ բոլոր նպաստներուն գումարն 50,000 ոսկւոյ հասնի։

(Մասիս)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 յուլիսի։ Ողորմած քոյրերի թատրոնում, որտեղ ուղեղորվում են դէպի Պասք-Տէկի, գտնվում է նոյնպէս կամաւոր Եկիսաբէտա Դմիտրիեվնա Միլիւտինա։

ՍԿՈՒՏԱՐԻ, 29 յուլիսի։ Ալբանցիները ձայնթեցրին յունական հիւպատոսի տունը Պրիզրենդի մէջ։ Տունը օրը բարձրացաւ։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ, 29 յուլիսի։ Վոլգա գետի այն կողմը անտառներ են այրվում։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 յուլիսի։ «Петерб. Вѣд.» լրագիրը լսել է, որ երկի առաւօտ «Դէմնաս հիւրանոցի մէջ կասանաւորված է Նշանաւոր յանցաւոր։

ՎԻԵՆՆԱ, 30 յուլիսի։ «Էվրդա» շոգենաւը, որ 953 ուսանողների հետ Զէրպա էր ուղեւորվում՝ Ջարգվեցաւ։ 21 մարդ ազատվեցան։

ԼՈՆԴՈՆ, 30 յուլիսի։ Էյլբ-բանը գանվում է Կանդահարից վեց մղոն հեռաւորութեամբ։ Քաղաքը պատրաստված է պաշտպանութեան համար և պաշարելիներ ունի։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԹԷՀԻՐԱՆ քաղաքի մի մասնաւոր դպրոցի համար պահանջվում է մի հմուտ **ՎԱՐԺԱՊԵՏ ՀԱՅՈՑ ԵՒ ՌՈՒՍԱՑ** լեզուների համար խիստ նպաստաւոր պայմաններով։ Յանկացողները կարող են դիմել **ՀԱՐՈՒԹՅՈՎ** քարվանսարան պ. **ՄԵԼԻՔ-ԱԶԱՐԵԱՆՑ** կանտորը։

Дозволено Цензурою 31 Іюля 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона